

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/7

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ 19.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 28.12.2015 թ-ի թիվ 5102909 ակտի դեմ:

«Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարի 02.12.2015թ. թիվ 5102909 հանձնարարագրի համաձայն «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ում իբրև թե կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում նախ 16.12.2015թ. կազմվել է ակտի նախագիծը, որից հետո 28.12.2015թ. թիվ 5102909 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտում նշված է, որ հարկային տեսուչ Կարինե Մարդոյանի կողմից 04.12.2015թ. ժամը 12:50-ին ք.Երևան, Մամիկոնյանց 35 հասցեում գտնվող խանութից կատարվեց գնում 400 դրամի չափով՝ էլիեր տեսակի խմորեղեն, սակայն ընկերության տնօրենի կողմից համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Այնուհետև ժամը 13:17-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն, չմուտքագրված գումարը մուտքագրվեց ՀԴՄ և նորից հանվեց Z հաշվետվություն: Ստուգողները գտել են, որ խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013թ. թ-իվ 846-Ն որոշմամբ հաստատված կանոնների 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները և կիրառել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ 300.000 դրամի չափով:

Ակտում նշվածը չի համապատասխանում իրականությանը, հետևապես առկա չէ որևէ հիմք ընկերությանը 300.000 դրամի չափով պատասխանատվության ենթարկելու համար, հետևյալ հիմնավորմամբ:

«Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ ստուգման օրը գտնվել է խանութում և ցանկանում է ներկայացնել, թե իրականում ինչպես է կատարվել ստուգումը:

Նախ ներկայացել է Վիգեն անունով տեսուչը, որին տնօրենը անձամբ ճանաչում է որպես տարածքը սպասարկող տեսուչի, և ՀԴՄ-ից հանել է ֆիսկալային հաշվետվություններ: Նշված հանգամանքը տնօրենը դիտարկել է որպես ընթացիկ գործողություն, սակայն հետագայում պարզվել է, որ այն իրականացվող ստուգման մաս է կազմում:

Հարկային տեսուչ Վիգենը, որը հանել է ֆիսկալային հաշվետվությունները, ընդգրկված չէ ՀՀ ֆինանսների նախարարի 02.12.2015թ. թիվ 5102909 հանձնարարագրում, այսինքն, նաև որևէ իրավունք չի ունեցել մասնակցել ստուգման գործընթացին: Արդյունքում խախտվել են «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որի համաձայն՝ հրամանում կամ հանձնարարագրում նշված պաշտոնավար անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը:

Ընդ որում հարկ է նշել նաև, որ ակտի համաձայն գնումը կատարվել է 12:50-ին, իսկ Z հաշվետվությունը դուրս է բերվել ժամը 13:17-ին, այսինքն՝ 27 րոպե հետո:

Երբ ստուգողները ներկայացան և հայտնեցին, որ ժամը 13:17-ին կատարվել է թխվածքի գնում, սակայն ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, տնօրենը պահանջել է

ներկայացնել և գնորդին և գնված ապրանքը, սակայն նշված պահանջները ստուգողների կողմից չեն կատարվել:

Ակտում նշված է, որ գնումը կատարվել է ստուգման հանձնարարագրում ընդգրկված հարկային տեսուչ Կարինե Մարդոյանի կողմից, որին ստուգման օրը տնօրենն ընդհանրապես չի տեսել, այսինքն, նա ստուգմանը չի մասնակցել:

Եթե իրականում ընկերության խանութից կատարվել էր 400 դրամի չափով խմորեղենի գնում և դրա դիմաց չէր տրամադրվել ՀԴՄ կտրոն, ապա ստուգողները պետք է ներկայացնեին թե գնորդին, թե գնված ապրանքը: Հակառակ պարագայում գնում կատարված լինելու և ՀԴՄ կտրոն չտրամադրելու մասին ակտում նշված տեղեկությունները, հիմնազուրկ են և չեն համապատասխանում իրականությանը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքներն ընկերությունը խնդրում է Արաբկիրի հարկային տեսչության կողմից 28.12.2015թ. կազմված թիվ 5102909 ակտը չեղյալ համարել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.12.2015 թ-ի թիվ 5102909 հանձնարարագրի համաձայն «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 28.12.2015 թ-ի թիվ 5102909 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Կարինե Մարդոյանի կողմից 04.12.2015թ. ժամը 12:50-ին ք.Երևան, Մամիկոնյանց 35 հասցեում գտնվող խանութից կատարվել է գնում 400 դրամի չափով՝ էկլեր տեսակի խմորեղեն, սակայն ընկերության տնօրենի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգում իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:17-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն 16770 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Չմուտքագրված գումարը ժամը 13:17-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 300.000 դրամ:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ ստուգման ընթացքում ֆիսկալային հաշվետվությունը դուրս է բերվել ՀՀ ֆինանսների նախարարի 02.12.2015թ. թիվ 5102909 հանձնարարագրում ընդգրկված անձի կողմից, հետևապես խախտվել են «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, հարկ է նշել հետևյալը.

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգումը կատարվել է հետևյալ կերպ: Այսպես, հարկային տեսուչ Կարինե Մարդոյանի կողմից 04.12.2015թ. ժամը 12:50-ին գնվել է էկլեր տեսակի խմորեղեն, որի դիմաց վճարված 400 դրամը չի մուտքագրվել ՀԴՄ

և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այնուհետև, խանութ են մուտք գործել ստուգում իրականացնող անձինք, ընկերության տնօրենին ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը, ինչպես նաև հայտնել են կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվելու մասին: Սակայն, երբ ստուգող անձինք փորձել են ՀԴՄ-ից դուրս բերել ֆիսկալային Z հաշվետվությունը, այն դուրս բերելու հետ կապված տեխնիկական խնդիրներով պայմանավորված, դա նրանց չի հաջողվել: Հարցին լուծում տալու նպատակով հարկային տեսչությունից հրավիրվել է համապատասխան մասնագետ, որը և վերացրել է ՀԴՄ-ի հետ առաջացած տեխնիկական խնդիրը: Դրանից հետո է միայն հնարավոր եղել ՀԴՄ-ից դուրս բերել խախտման փաստը հիմնավորող համապատասխան հաշվետվությունները:

Ընկերության տնօրենին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե տեսագրվում է արդյոք խանութի տարածքը, հնչեց դրական պատասխան: Ընկերության տնօրենին առաջարկվեց ներկայացնել ստուգումը կատարվելու օրվա տեսագրությունը, սակայն տնօրենը հայտարարեց, որ այն չի պահպանվել:

Հանձնաժողովը գտնում է, որ ստեղծված իրավիճակով պայմանավորված հարկային տեսչությունից հրավիրված մասնագետն ընդամենը օգնել է լուծել ՀԴՄ-ի հետ առաջացած տեխնիկական խնդիրը: Այսինքն, ստուգման գործընթացին նա չի մասնակցել: Հետևապես գանգատում բերված պնդումները, որ խախտվել են «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ ստուգմանը մասնակցել է ստուգման հանձնարարագրում չընդգրկված անձ, հիմնավոր չեն և չեն համապատասխանում իրականությանը:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը եզրակացնում է, որ իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգմամբ հիմնավորվել է ընկերության կողմից ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների խախտման, այն է՝ կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը, որի համար և կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 28.12.2015 թ-ի թիվ 5102909 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

